ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ

1911 թ. սեպտ.—1912 թ. սեպտ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Դ. Աղանեանցի, Պօլից. 7
1914

373
Թ 64

39756-63
373 | Թիֆլիսի Սա-
Բ-64 | բան-Դավթանքի
տեղեկագիր
Մ-125 13/6 80

Հ 3-8462 12 2 APR 2013
6 - MAR 2010
373
Բ-64
3378

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ

1911 թ. սեպտ. — 1912 թ. սեպտ.

Հոգաբարձական Խորհրդի կազմը

Նախագահ **Եփրեմ Եպիսկոպոս Սուրիասեան**

Անդամներ
- *Մայրապետ* Հ. Թայիրեան
- Ն. Անանեան
- Հ. Առաքելեան (*փոխ-Նախագահ*)
- *Բժշկապետ* Բ. Նաւասարդեանց
- Մ. Մելիքեան (*գանձապահ*)
- Ս. Մելքումեան
- *Տեսուչ* Սս. Մալխասեանց

Քարտուղար Մ. Յարութիւնեան

Հոգաբարձական Խորհուրդն ունեցել է 1911 թ. սեպտ. 7-ից մինչև 1912 թ. յունիսի 28-ը 30 նիստ, որին մասնակցել են՝

Եփրեմ Եպ. Սուրիասեան	19	*անդամ*
Մայրապետ՝ կ. Հ. Թայիրեան	25	»
Ն. Անանեան	29	»
Հ. Առաքելեան	24	» (*բաց. է քաղաքից*)։
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան	30	»
Ս. Մելքումեան	21	»
Մ. Մելիքեան	30	»
Սս. Մալխասեանց	30	»

51.364

Հաշուէտու տարուայ ընթացքում Հոգաբարձական Խորհուրդը շարունակելով իր գործունէութիւնը նոյն ուղղութեամբ, որ նկարագրուած է 19¹⁰/₁₁ ուս. տ. տեղեկագրի մէջ՝ աշխատում էր աւելացնել դպրոցի եկամուտները և բարձրացնել դպրոցի բարոյական-հոգևոր կողմը միահամուռ ջանքերով Մանկավարժական մարմնի հետ. նոյն ուղղութեամբ ընթանալով՝ աշխատել է հնարաւոր դիւրութիւններ տալ չքաւոր աշակերտուհիներին օգտուելու դպրոցի բարիքներից—ազատելով նրանց ուսման թոշակից, հայթայթելով ամենաչքաւորներին նախաճաշ, դեղորայք, հագուստ և ուղարկելով ամարանոց կազդուրուելու ամենաթուլակազմ և հիւանդոտ աշակերտուհիներից մի քանիսին (1912 թ. արձ. №№ 26, 27)։ Չքաւորներին լայն չափով օգնութիւն հասցնելու նպատակով՝ Հոգաբարձական Խորհուրդը նախագծել էր կազմել դպրոցին կից «Չքաւոր աշակերտուհիներին նպաստող ընկերութիւն», որի կանոնադրութեան մշակումը յանձնել էր իր անդամներից մէկին (արձ. 1910 թ. հոկտ. 19-ի № 7), սակայն ինչ-ինչ պատճառներով յետաձգուեց նրա իրագործումը։

Միւս կողմից էլ Հոգաբարձական Խորհուրդն անուշադիր չէր թողնում բարձրացնելու ուսուցիչների նիւթական դրութիւնը, որպէսզի կարող ոյժերը սերտ կապուին դպրոցի հետ։ Աւանդելիք ուսմունքներն աշակերտուհիների համար բեղմնաւոր անելու համար՝ Հոգաբարձական Խորհուրդն առանձին հոգացողութեան առարկայ էր դարձրել դպրոցի գրադարանը, որից՝ շնորհիւ կանոնաւոր գրացուցակների բացակայութեան և գրքերի սակաւութեան, ցանկալի չափով չէր կարելի օգտուել. Հոգաբարձական Խորհուրդը աշխատել է կարգաւորել և ճոխացնել դպրոցի գրադարանը՝ կազմել տալով կանոնաւոր ցուցակներ և ձեռք բերելով նորանոր գրքեր, որոնց ընտրութիւնը կատարել է Մանկավարժական մարմնի հետ. նոյնն է արել ֆիզիկական կաբինէտի և ուսումնական պիտոյքների նկատմամբ (1912 թ. արձ. № 25), քանի որ տարիներով նոր գործիքներ և ուսումնական պիտոյքներ չէին գնուել։ Հոգաբ. Խորհուրդն աշխատում էր նախահաշուի մէջ իւրաքանչիւր յօդուածին յատկացրած գումարը գործադրել իր նպատակին. շնորհիւ այս բանի հաշուէտուութեան տարում ֆիզիկական կաբինէտի համար ծախսուել է 470 ր. 78 կ., նախահաշուում որոշած գումարից աւել 70 ր. 78 կ., ուսումնական պիտոյքների համար՝ 224 ր. 27 կ., նախահաշուից պակաս 75 ր. 73 կ., գրադարանի համար՝ 316 ր. 85 կ., նախահաշուից աւել 16 ր. 85 կ.։

Դպրոցի շէնքը երկար ժամանակ ներսից հիմնական վերանորոգութեան չէր ենթարկուել. Հոգ. Խ-դը՝ ի նկատի ունենալով մանաւանդ նրա հակառողջապահական պայմանները, հաշուէտուութեան տարուայ վերջը իր նիստերում (1912 թ. արձ. №№ 25, 26, 27) առանձնապէս գրաւուեց այդ խնդրով և ճարտարապետ պ. Սահ. Լիսիցեանի խորհրդակցութեամբ որոշեց դպրոցի շէնքը ներսից ամբողջովին վերանորոգել, յատկացնելով դրան 1000 ռուբլի։ Վերանորոգուեցին և դպրոցական կահ-կարասիները՝ աշակերտական սեղանները, գրատախտակները և այլն։ Վերանորոգութեան հետ դպրոցում և քարվանսարայում մտցրած է էլէքտրական լուսաւորութիւն։

Թէպէտ այդ բարենորոգութիւնները պահանջում էին մեծ ծախսեր, բայց Հոգ. Խ-դն աշխատել է այնպէս տանել դպրոցի դրամական մասը, որ դպրոցը դեֆիցիտ չունենալուց զատ՝ յաւելեալ գումարով փակէ իր բիւջէն։

Այս նպատակին հասնելու համար Հոգ. Խ-դը մի կողմից աշխատել է խոյս տալ աւելորդ ծախսերից, իսկ միւս

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ ԳԱ ԳՍՀ
Ա. ԱՄ. Ա. Մասեանի
ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
39756-63

L - MAR 2010

կողմից քարվանսարայի վարձակալների հետ բանակցելով հետզհետէ աւելացնել կրպակների վարձագները։ Դպրոցի գլխաւոր եկամուտների նկատմամբ Հոգ. Խ-ն արել է հետեւեալ բաբառքումը.—

1. Քարվանսարայի եկամուտը նախորդ հոգաբարձութիւնների ժամանակ միջին թուով հասնում էր 21,200 ռուբլու. Հոգ. Խ-դը կրպակակալների համաձայնութեամբ դարձրեց 25,472 ռ., որն սկսուեց ստացուել 1910 թ. ապրիլի 1-ից. իսկ ներկայ հաշուէտվութեան տարում դարձրեց 27,816 ռ., որ ստացվում է 19¹²/₁₃ ուս. տար. սկզբից։ Այսպիսով Հոգ. Խ-դը իր օրով քարվանսարայի եկամուտը աւելացրեց տարեկան 6616 ռուբլիով (1911 թ. արձանագր. №№ 4, 7, 8, 10 – 13, 1912 թ. արձ. №№ 14—17, 19, 20, 21, 27)։

2. Դպրոցի 90,000 ռ. նոմինալ արժողութեամբ 4% պետական ռենտան որոշեց փոխել Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկ. 5% օբլիգացիաների (1910 թ. հոկտ. 19-ի նիստ արձ. № 7, 1911 թ. արձ. №№ 20, 21, 23), որով դրամագլուխը դարձաւ 96,100 ռուբլու նոմինալ արժող. 5% օբլիգացիաներ, իսկ զուտ %-ը 4564 ռուբլի տարեկան, փոխանակ նախկին 3420 ռուբլու։

3. Հոգ. Խ-դը հարկ համարեց պակասացնել քարվանսարայի կառավարչի ռոճիկը՝ նշանակելով տարեկան 600 ռուբլի 1200 ռուբլու փոխարէն. և այս այն պատճառով, որ քարվանսարայի կրպակները տրվում են մեծ մասամբ նօտարական պայմաններով, և դպրոցի կալուածքը մի տեղ կենտրոնացած լինելով՝ ընդհանրապէս շատ գործ չկայ անելու (1911 թ. արձ. № 3)։

Անա այսպիսի միջոցներով Հոգ. Խ-դը կարողացաւ առանց դեֆիցիտի բաւարարութիւն տալ դպրոցի համար կենսական նշանակութիւն ունեցող պահանջներին և ձեռնամուխ լինել նորանոր աւելի կարևոր խնդիրների լուծման. այդպիսի կարևոր խնդիրներից էին—

1. Ուսուցիչների ապահովութեան խնդիրը, որով

զբաղուեց Հոգ. Խ-դն իր մի շարք նիստերում (1911 թ. մայիսի 18-ի նիստ արձ. № 23, հոկտ. 5-ի նիստ արձ. № 4, 1912 թ. արձ. №№ 24, 25) և յաջողութեամբ գլուխ բերեց՝ ստանալով իր մշակած ուսուցչական թոշակարկղի կանոնադրութեան հաստատութիւնը Նորին Վեհափառութեան 1912 թ. նոյեմբ. 20-ի կոնդակով № 1524։ Թոշակարկղի ֆոնդի համար Հոգ. Խ-դը արդէն նուէր ունէր ստացած 500 ռուբլի յարգելի տիկ. Վ. Քանանեանից, դպրոցի կողմից էլ յատկացրեց ամեն տարի 1200—1300 ռուբլի։ Թոշակարկղին կից, առանձին կանոնադրութեամբ, հիմնեց նաև փոխատու գանձարան ուսուցիչների համար (1911 թ. արձ. № 3). թէ թոշակարկղը և թէ փոխատու գանձարանն արդէն սկսել են գործել։

2. Մի շարք նիստերում (1912 թ. արձ. №№ 17, 20) արծարծուած դպրոցի չքաւ. աշակերտուհիներին նախաճաշ տալու խնդիրը իր դրական որոշումն ստացաւ, որ և գործադրուել սկսուեց 1912 թ. մարտի 5-ից. իսկ 19¹²/₁₃ ուս. տ. նախահաշուի մէջ դրան յատկացրուեց 500 ռուբլի՝ 60 հոգու համար։

3. Դասագինն աւելացնելու խնդիրը.—ուսուցիչներին ամբողջովին դպրոցի հետ կապելու, նրանց աշխատանքն աւելի արդիւնաւէտ դարձնելու նպատակով՝ անհրաժեշտ համարեց 50 ռուբլի դասագինը բարձրացնել մինչև 55 ռուբլիով, բացի դրաւոր աշխատանքների համար տրուած վարձատրութիւնից։

4. Դպրոցի երկարամեայ դասատու հ. Արսէն ա. ք. Բագրատունուն (այժմ հանգուցեալ) ապահովութեան խնդիրը.—ի նկատի ունենալով, որ «կրօնուսոյց հ. Արսէն ա. ք. Բագրատունին ծերութեան և հիւանդութեան պատճառով թէ անցեալում և թէ այս ուսումնական տարում չէր կարողանում կանոնաւոր յաճախել դպրոց, որով տուժում էին կրօնի դասերը, միւս կողմից ի նկատի ունենալով, որ նա դպրոցի բացման օրից 35 տարի շարունակ համարուել է դպրոցի ժրաջան և երախտաւոր աշ-

խատաւորը, որ նա իր բացառիկ գործունէութեամբ նուիրուած է եղել դպրոցի շահերին և վայելել է բոլորի սէրն ու համակրանքը — որոշուել է տալ նրան հանգստեան արձակուրդ, և որպէս տրիտուր նրա այդպիսի բազմամեայ բարեխիղճ ծառայութեան՝ նրա ստացած տարեկան 120 ռուբլի կենսաթոշակը դարձնել տարեկան 500 ռուբլի ցկեանս նորա» (1911 թ. յունիսի 5-ի նիստ արձ. № 36, սեպտ. 21-ի նիստ արձ. № 3, 1912 թ. յունիսի 28-ի նիստ արձ. № 30)։ Սակայն ի նկատի ունենալով, որ հ. Բագրատունին մի քանի ամսով միայն կարողացաւ օգտուել իր կենսաթոշակից (վախճ. դեկտ. 7-ին), և որ հանգուցեալի այրին գրաւոր խնդիր էր տուել կենսաթոշակը շարունակել մինչև փոքրահասակ աղջկայ չափահաս դառնալը, որ սովորում է դպրոցում, Հոգ. Խ-դն՝ ըստ էութեան չքննելով խնդիրը, որոշեց՝ շարունակել նոյն գումարը տալ մինչև 1913թ. սեպտ. մէկը (1912 թ. յունիսի 28-ի նիստ արձ. № 30)։

Յիշեալ անհրաժեշտ խնդիրներին նիւթական բաւարարութիւն տալուց յետոյ, Հոգաբարձական Խորհուրդը իր հայթայթած միջոցներով կարողացաւ $19^{12}/_{13}$ ուս. տ. նախահաշուի մուտքը հասցնել 34,810 ր., իսկ ելքը՝ 34,674 ր։

Դպրոցի ուսումնական մասի մէջ Հոգաբարձական Խորհրդի ցոյց տուած հոգացողութիւնն արտայայտուեց նրանով, որ ուշադրութեան առաւ դպրոցի ուսումնական ծրագիրը, որ մինչև այդ ժամանակ վերջնական քննութեան չէր առնուած Հոգաբարձական Խորհրդի կողմից և չէր ներկայացուած հոգևոր իշխանութեան հաստատութեան։ Հոգաբարձական Խորհուրդը քննութեան առաւ Մանկավարժական Ժողովի կողմից վերջնական ձևով վերամշակած ծրագիրը և ուղարկեց Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն։ Այսպիսով դպրոցն ունենալու է մի որոշ և պատշաճաւոր իշխանութիւնից հաստատուած ծրագիր։

Հոգաբարձական Խորհուրդը հետամուտ է եղել կարգի բերելու նաև Հոգ. Խ-դի դիւանը, հաշուապահական մասը և գործունէութիւնը, որ մինչ այդ անկարգ էր։

Հոգաբարձական Խորհուրդը նախորդ հոգաբարձութիւնից ստացել էր պարտապանների ցուցակ 5353 ր. 79 կ. գումարի. այդ հաշուից իր 3-ամեայ գործունէութեան ընթացքում կարողացաւ ստանալ ընդամենը 1411 ր. 95 կ., իսկ մնացածը՝ 3941 ր. 84 կ. անկարող եղաւ ստանալ, չնայած ձեռնարկած կտրուկ միջոցներին. 3941 ր. 84 կ. գումարի մէջ է նախկին քարտուղար և կառավարիչ Գ. Ս. Տէր-Ջանեանի 3023 ր. 84 կոպէկ պարտքը, որի կատարողական թերթը ստացուել էր նախորդ հոգաբարձութիւնից։

Հոգաբարձական Խորհուրդը կամենալով դպրոցի ունեցած 96,100 ր. 5% օբլիգ. նոմինալ արժողութեամբ գումարը թողնել անձեռնմխելի և միևնոյն ժամանակ նրանից ստացած %-ի փոխարէն աւելի մեծ % ստանալ՝ մտադիր էր նրանով գնել մի անշարժ կալուածք Թիֆլիսում. սակայն առիթ չունենալով՝ չկարողացաւ իրագործել իր մտադրութիւնը, որը սակայն յոյս ունի, որ յաջորդ Հոգ. Խ-դը կաշխատէ իրագործել այդ։

Հոգաբարձական Խորհուրդը ուսուցչական մարմնի հետ մասնակցել է ազգային-հասարակական կեանքի մէջ տեղի ունեցած նշանաւոր դէպքերին. այսպէս մասնակցել է «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանին, «Հայկական գրերի գիւտի 1500 ամեայ և տպագրութեան 400-ամեայ միացեալ յոբելեանին, Թուրքահայ դերասան Մնակեանի յոբելեանին և Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. կաթուղիկոսի հաստատութիւնը շնորհաւորել է հեռագրով։

1911 թ. սեպտ.—1912 թ. սեպտ.

Մ.-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒԸ

ԱԿՏԻՎ

Հաշուեկշիռ

1	Ուսուցչական թոշակարկղի ֆոնդ (նուէր տիկ. Վ. Քանանեանից .	500	—		
2	Շարժական կայք — մնացորդ . .	7903	07		
3	Գրքեր (19¹⁰/₁₁ ուս. տարուց) — մնացորդ.	165	90		
4	Դասական պիտոյքներ — մնացորդ	2113	26		
5	Կրպակակալների հաշիւ — „	99	18		
6	Աւանների հաշիւ „	80	—		
7	Ապահովագրութիւն դպր. շէնքի ց1-ն յունվ. 1912 թ. . . .	41	11		
8	Ապահովագրութիւն քարվ. շէնքի ց1-ն յունվ. 1912 թ.	60	54		
9	Ապահովագրութիւն դպր. շարժ. կայքի ց10-ն մարտի 1912 թ. .	17	81		
10	Նպաստ Ախալքալաքի ծխ. դպր. ի հաշիւ 19¹¹/₁₂ ուս. տ. . . .	150	—		
11	Անշարժ կայք ա. Յովհաննեան քար. Սիօնի փողոցում. 400000 — բ. Նոր կրպակներ քարվ. կից, Կոլոկոլնիյ 7060 91 գ. Դպր. շէնք Բեբուտովկիյ № 14 . . 50000 —	457060	91		
12	96000 բուբլի նոմ. արժ. Թիֆլիսի Քաղ. Վ. Ընկ. 5% օբլիգացիաներ (121 թերթ. — 71-ը 1000-ական, 50-ը 500-ական բուբլանոցներ, դպրոցի անունով պահվում են Թիֆ. Քաղ. Վ. Ընկ. Բանկ. անդորրագրեր №№ 7 և 8)	85440	—		
13	Թիֆլ. Առևտր. Բ. ընթ. հաշիւ — մնացորդ.	2097	82	555729	60
			—	**555729**	**60**

առ 1-ն սեպ. 1911 թ.

ՊԱՍՍԻՎ

1	Կրպակակալների հաշիւ — մնացորդ	626	62	—	—
2	Կառավարչի հաշիւ — „ . . .	269	65	896	27
3	Դրամագլուխ — մնացորդ. . . .	—	—	554833	33
				555729	**60**

Ղ ա խ ա հ ա

ՄՈՒՏՔ		
§ 1		
Գլխոցապատկան քարվանսարայի վրակներից	26,444 —	
§ 2		
Տոկոսաբեր թղթերի՝ 96,000 ր. նոմինալ արժող. Թիֆլ. Քաղ. Վ. Ընկ. 5% օբլիգացիաների զուտ %-քը	4560 —	
§ 3		
Ուսման թոշակ՝ աշակերտուհիներից	3000 —	
§ 4		
Աշակերտուհիների ձեռագործների վաճառումից	100 —	
§ 5		
Անակնկալ մուտք	250 —	34,354 —
Փոխադրելի . . .	— —	34,354 —

ՉԻՒ	1911 թ. սեպտ.	1912 թ. սեպտ.	ԵԼՔ	
§ 1				
	ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ			
1	Ռոճիկ Տեսչին	2000 —		
2	„ Երկու վերակացուհուն	900 —		
3	„ Աւագ „ „ . . .	600 —		
4	„ Մանկավ. ժող. քար .	100 —		
5	„ գրադարանապետին .	120 —		
6	„ դասագին՝ 50 ր. × 306	*15100 —		
7	„ գրաւոր. վարձ. 5 × 152	760 —		
8	„ բժշկին	500 —		
9	„ բժշկի օգնականուհուն	300 —		
10	„ Հոգ. խ. դի և տեսչի ք.	480 —		
11	„ հաշուապահին . . .	240 —		
12	„ երեք ծառ. և աղախ.	996 —		
13	„ դռնապանին	240 —	22336 —	
1	Ուսուցիչների և պաշտօն. թոշակ.	1260 —		
2	Իզմիրլեան կաթ. անուան որդ.	40 —		
3	Ֆիզիկական կաբինէտ	600 —		
4	Գրադարան	300 —		
5	Ուսումնական պիտոյքներ . . .	300 —		
6	Ձեռագործի նիւթեր	100 —		
	Փոխադրելի . . .	2600 —	22336 —	

*) 4 դասը ձրի է պարապում պ. Տեսուչը։

ՄՈՒՏՔ		Ելահանում	
Փոխադրուած . .	—	34354	—
	—	34354	—

ՀԻՇ	1911 թ. սեպտ. — 1912 թ. սեպտ.				
	Փոխադրուած 2600	—	22,336	—	
7	Կահ-կարասիք և վերանորոգութիւն 100	—			
8	Հանդէսներ, գրական-երաժշտական երեկոյթներ և էքսկուրսիաներ . . . 250	—			
9	Դեղորայք և բժշկական օգնութիւն 110	—			
10	Վառելիք և լուսաւորութիւն 500	—			
11	Ջուր 120	—			
12	Շինութեան մանր վերանորոգութիւն 500	—			
13	Շինութեան ապահովագրութիւն 124	—			
14	Շարժական գոյքի ապահովագրութիւն 33	—			
15	Դիւանական և տպարանական ծախսեր 200	—			
16	Անակնկալ ծախս . . . 100	—			
17	Հիմնադրի հոգեհանգիստ 60	—			
18	Մանր ծախսեր 100	—	4797	—	27,133 —
	§ 2				
	ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ				
1	Ռոճիկ կառավարչին . . 600	—			
2	„ երկու դռնապահին 480	—			
3	„ աղբ թափող մշակին 72	—	1152	—	
	Փոխադրելի . . .		1152	—	27,133 —

ՄՈՒՏՔ		Գումար	
	Փոխադրուած . .	— —	34,354 —
		— —	34,354 —

ՀԻՒ 1911 թ. սեպտ.—1912 թ. սեպտ.			ԵԼՔ	
	Փոխադրուած . .	1152 —	27,133 —	
1	Վառելիք և լուսաւորութիւն . . . . . 50 ր. —			
2	Ջուր . . . . . 140 ր. —			
3	Շինութեան մանր վերանորոգ. 500 ր. —			
4	„ ապահովագրութիւն . . . . 145 ր. —			
5	Տուրքեր . . . . . 3030 ր. —			
6	Մանր ծախսեր . . . . 50 ր. —	3915 —	5067 —	
	§ 3			
	ՆՊԱՍՏՆԵՐ			
1	Թիֆլ. կուսանաց վանքին նպաստ	300 —		
2	Ախալքալաքի հայոց եկ-ծխ. դպր.	150 —		
3	Կրօնուսոյց Արսէն ք. Բագրատունուն *)	500 —	950 —	
			33,150 —	
	Մնացորդ . . .		1204 —	
		— —	34,354 —	

*) Հոդ. Խ-դի 1911 թ. սեպտ. 21-ի նիստ.

39756-63

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZSSR ՍՍՌ ССР
Ա. ԻՄ Մասիմովա

ՄՈՒՏՔ — Զուտ դպրոցական մուտքի եւ ելքի հաշիւ 1911 թ. սեպտ. — 1912 թ. սեպտ. ԵԼՔ

1	Ուսման թոշակ	3158	—				
2	Զեռագործների վաճառումից .	23	75	3181	75		
	Փոխադրելի . . .	—	—	3181	75		

1	Ռոճիկ տեսչին	2000	04		
2	» վերակացուհիներին (3 հ)	1499	88		
3	» Մանկ. ժող. քարտ. . .	99	96		
4	» գրադարանապետին . .	99	96		
5	» դասագին	15,100	—		
6	» գրաւորների վարձատրութիւն	759	49		
7	» բժշկին և օգնականուհուն	800	04		
8	» ծառաներին (4 հոգի). .	1051	—		
9	» դռնապահին.	255	—	21,665	37
1	Հանգ. Իզմիրլեան կաթող. անուան որդեգրուհու ծ. .	75	51		
2	Հանդէսներ՝ գրական - երաժշտ. էքսկուրսիա (Սանդիին)	156	31		
3	Դեղորայք և բժշկական օգնութիւն չքաւ. աշ.	357	74		
4	Զեռագործի նիւթեր	104	79		
5	Կահ-կարասի և նրանց վերանոր.	219	52		
6	Վառելիք և լուսաւորութիւն . .	69	40		
7	Զուր	85	30		
8	Դպրոցական շէնքի մանր վերանորոգութիւն.	1303	51		
9	Դպրոցական շէնքի ապահովագրութիւն 1911 թ. սեպտ. — 1912 թ. սեպտեմբերի 1-ը	—	—		
		122	63		
10	Շարժական գոյքի ապահ. 1911 թ սեպտ. — 1912 թ. սեպտ.	29	06		
	Փոխադրելի . . .	2523	77	21,665	37

Մ Ո Ի Տ Ք Զուտ դպրոցական մուտքի եւ

	Փոխադրուած	— —	3181 75
	Փոխադրվում են մտից և ելից ընդհանուր հաշիւը զուտ դպրոցական ծախսերը	— —	21,322 48
			24,504 23

Դիւանական ծախսերի

	Փոխադրվում են մտից և ելից ընդհանուր հաշիւը դիւանական բոլոր ծախսերը	— —	1010 10
		— —	**1010 10**

ելքի հաշիւ 1911 թ. սեպտ.—1912 սեպտ. Ե Լ Ք

	Փոխադրուած	2523 77	21,665 37
11	Նախաճաշ դպրոցում չքաւոր աշակերտների համար 1912 թ. մարտի 5-ից մինչև տարուայ վերջը . .	— —	
		108 24	
12	Մանր ծախսեր	206 85	2838 86
			24,504 23

հաշիւ 1911 սեպտ.—1912 թ. սեպտ.

1	Հոգ. խ-դի և տեսչի քարտուղարին	480 —	
2	» հաշուապահին	240 —	
3	Գրասենեկային ծախսեր (թուղթ, թանաք, յայտարարութիւն) . .	106 45	
4	Տպարանական ծախսեր (բլանկներ գործավ., 19¹⁰/₁₁ ուս. տ. տեղեկագրի., ատտեստատ. բլանկ) .	124 65	
5	Հիմնադրի հոգեհանգիստ . . .	59 —	1010 10
		— —	**1010 10**

Նպաստների

	Փոխադրվում են մաքց և ելից ընդհանուր հաշիւը նպաստները	—	—	949 92

Տոկոսաբեր թղթերի %

1	96,000 ր. նոմին. արժ. Քաղ. Վ. Ընկ. 5% օբլիգացիաների զուտ %-ը	4560	—	
2	Առևար. Բ. ընթացիկ հաշուի %%-առ. 1-ն յունվ. 1911 թ. . . .	79	12	4639 12
		—	—	4639 12

հաշիւ 1911 թ. սեպտ.—1912 թ. սեպտ.

1	Թիֆլիսի կուսանաց վանքին . .	300	—	
2	Ախալքալաքի Հայոց եկ.-ծխ. դպ.	150	—	
3	Սր. ա. ք. Բագրատունուն . .	499	92	949 92

% հաշիւ 1911 թ. սեպտ.—1912 սեպտ.

	Փոխադրվում են մաքց և ելից ընդհանուր հաշիւը ստացուած բոլոր %%-ը	—	—	4639 12
		—	—	4639 12

ՄՈՒՏՔ Քարվանսարայի մուտքի

1	Դպրոցապատկան քարվանսարայից ստացուած է	—	—	26,232 05
		—	—	26,232 05

ԵԼՔ եւ ելքի հաշիւ 1911 թ. սեպտ. — 1912 սեպտ.

1	Ռոճիկ երկու դռնապահին . .	480	—	
2	» աղբ թափող մշակին .	72	—	
3	Տուրքեր	3598	73	
4	Շէնքի ապահովագրութիւն 1911 թ. սեպտ. սեպտ. 1-ից — 1912 թ. սեպտ. 1-ը	145	54	
5	Մանր վերանորոգութիւններ .	369	85	
6	Վառելիք և լուսաւորութիւն .	211	29	
7	Ջուր	163	42	
8	Մանր ծախսեր	141	78	5182 61
	Փոխադրվում է մտից և ելից ընդհանուր հաշիւը դուտ մուտքը	—	—	21,049 44
		—	—	26,232 05

ՄՈՒՏՔ — Ամակնկալ մուտքի եւ ելքի հաշիւ 1911 թ. սեպտ.—1912 թ. սեպտ. — ԵԼՔ

1	Զքաւոր աշակերտուհիների օգտին հանգուցեալ Գուլազեանի ընտանիքից	50	—	
2	Մողնոյ ս. Գէորգ եկեղեցուց նոյն նպատակով	30	—	
3	Հոգ. Խ-դի սրբազան նախագահից՝ տ. Եփրեմ եպիսկոպոսից հիւանդ աշակերտուհու համար	25	—	
4	Կրակից ապահովագրող ընկ. վարձատրութիւն դպրոցի տանիքում այրուած կոճի համար	50	—	
5	Կառավարչի հաշուից նրա 1911 թ. հոկտ. մինչև 1912 թ. սեպտ. ռոճիկը (Հոգ Խ-դի. 1912 թ. յունիսի 12-ի նիստի որոշմամբ արձ. № 29)	—	—	
		566	95	
6	Զանազան անձանց (կրպակակալների) հաշուից դրվում է դպրոցի օգտին	—	—	
		338	44	1060 39
		—	—	1060 39

1	Գրադարանապետին յաւելեալ աշխատանքի համար	50	—	
2	Միանուագ նպաստներ դպրոցի պաշտօնեաներին	200	—	
3	Վեհափառ կաթուղիկոսի ընդունելութեան համար	100	—	
4	2 կրպակի 2 ամսուայ դատարկ մնալու պատճառով կորուստը .	16	—	
5	Հոգեհանգիստ կատարուած դրպրոցում Արսէն ա. ք. Բագրատունու համար	4	25	370 25
	Փոխադրվում է մաքից և ելքից	—	—	
	ընդհանուր հաշիւ մուտքի մնացորդ	—	—	690 14
		—	—	1060 39

ՄՈՒՏՔ — Զուտ մուտքի եւ ելքի ընդհանուր հաշիւ

1	Դպրոցական քարվանսարայից	21,049	44		
2	Տոկոսաբեր թղթերի և ընթացիկ հաշուի %%	4639	12		
3	Անակնկալ մուտք	690	14	26,378	70
		—	—	26,378	70

Դրամարկղի ընդհանուր հաշիւ

1	Քարվանսարայից	26,232	05		
2	Տոկոսաբեր թղթերի և Առևտ. Բ. ընթ. ը. %%	4639	12		
3	Ուսման թոշակ	3158	—		
4	Անակնկալ մուտք	1060	39		
5	Ձեռագործների վաճառումից	23	75	35,113	31
		—	—	35,113	31

ԵԼՔ — Զուտ հաշիւ 1911 թ. սեպտ.—1912 թ. սեպտ.

1	Դպրոցի վերաբերեալ ծախսեր	21,322	48		
2	Դիւանական ծախսեր	1010	10		
3	Նպաստներ	949	92	23,282	50
	Մուտք և ելքի տարբերութիւնը			3096	20
		—	—	26,378	70

Դրամարկղի ընդհանուր հաշիւ 1911 թ. սեպտ.—1912 թ. սեպտ.

1	Դպրոցի վերաբերեալ ծախսեր	24,504	23		
2	Դիւանական ծախսեր	1010	10		
3	Նպաստներ	949	92		
4	Քարվանսարայի վերաբերեալ ծախսեր	5182	61		
5	Անակնկալ ծախսեր	370	25	32,017	11
	Մուտքի և ելքի տարբերութիւնը			3096	20
		—	—	35,113	31

Ա Կ Տ Ի Վ — **հաշուեկշիռ**

1	Ուսուցչական թոշակարկղի զանձ. հ. մնացորդ առ 1-ն սեպտ. 1912 թ.	1760	—
2	Անշարժ կայքի հ. ա. Յովհաննեան քարվանս. Սիօնի փողոցում . . . 400,000 ր.— բ. Քարվանսարային կից նոր կըրպակներ, կօլօկ.» — 7,060 ր. — 91 գ. Դպրոցի շէնքը, Բեհբութեան փող. № 14 . . . 50,000 ր.—	457060	91
3	Տոկոսաբեր թղթեր — 96,000 ր. նոմինալ արժող. Թիֆլ. քաղ. վ. ընկ. 5% օբլիգ. — 17 թերթ 1000 ական, 50 թերթ 500 — ական բուբլանոցներ — պահվում են նոյն ընկ. բանկում անդորրագրերով №№ 7,8, իսկական արժէքը	85,440	—
4	Շարժական կայքի հ. մնացորդ առ 1-ն սեպտ. 1912 թ.	8259	66
5	Ուսումնական պիտոյքների հ. մնացորդ առ 1-ն սեպտ. 1912 թ.	2337	53
6	Քիմիական կաբինէտի հ. մնացորդ՝ 1911 թ. սկսած. առ 1-ն սեպտ. 1912 թ.	470	78
7	Գրադարանի հ. մնացորդ՝ 1910 թ. սկսած, առ 1-ն սեպտ. 1912 թ.	482	75
8	Թիֆլիսի Առեստ. Բ. ընթ. հաշիւ մնացորդ առ 1-ն սեպտ. 1912 թ.	2506	94
9	Աւանսների հաշիւ մնացորդ առ 1-ն սեպտ. 1912 թ.	15	—
	Փոխադրելի . . .	558333	57

1-ն սեպտ. 1912 թ. — **Պ Ա Ս Ի Վ**

	Անցնող գումարների հաշիւ ստացուած է 1912/13 ուս. տ. հաշիւից	527 62
	Փոխադրելի . . .	527 62

Ա. Կ Տ Ի Վ. հաշուեկշիռ

	Փոխադրուած	558333	57		
10	Դպրոցի շէնքի ապահովագրութիւն 1912 թ. սեպտ. 1-ից — 1913 թ. յունվ. 1-ը.	40	83		
11	Շարժական գոյքի ապահովագրութիւն 1912 թ. օգ. 26-ից — 1913 թ. ապր. 26-ը. . . .	22	50		
12	Քարվանսարայի ապահովագրութիւն 1912 թ. սեպտ. — 1913 թ. փեբրվ. 1-ը.	60	25	558457	15
		—	—	558457	15

առ 1-ն սեպտ. 1912 թ. Պ Ա Ս Ի Վ.

	Փոխադրուած	—	—	527	62
	Դրամագլուխ	—	—	557929	53
		—	—	558457	15

ԱԿՏԻՎ Համեմատական հաշուե

		առ. 1-ն սեպտ. 1911 թ.		առ 1-ն սեպտ. 1912 թ.	
1	Ուսուցչական թոշակարկղի գանձարան	500	—	1760	—
2	Անշարժ կայք	457060	91	457060	91
3	Տոկոսաբեր թղթեր—96,000 ր. նոմին. արժ. 5% օբլիգ.	85,440	—	85,440	—
4	Շարժական կայք	7903	07	8259	66
5	Ուսումնական պիտոյքներ	2113	26	2337	53
6	Ֆիզիքական կաբինետ 1911 թ. սկսած	—	—	470	78
7	Գրադարան (1910 թ. սեպտ.-ից)	165	90	482	75
8	Թիֆլիսի առևտր. Բ. ընթ. հաշիւ	2097	82	2506	94
9	Աւանսների հաշիւ	80	—	15	—
10	Դպրոցի շէնքի ապահովագրութիւն	41	11	40	83
11	Դպրոցի շարժական կայքի ապահովագրութիւն	17	81	22	50
12	Քարվանսարայի ապահովագրութիւն.	60	54	60	25
13	Կրպակակալների հաշիւ, դեբետորներ	99	18	—	—
14	Ախալքալաքի Հ. ծխ. դպրոցին նպաստ	150	—	—	—
		555729	**60**	**558457**	**15**

ԿՐԵԴԻՏՈՐՆԵՐ առ. 1-ն սեպտ. 1911 և 1912 թ. թ. ՊԱՍՍԻՎ

		առ. 1-ն սեպտ. 1911 թ.		առ. 1-ն սեպտ. 1912 թ.	
1	Կրպակակալների հաշիւ, կրեդիտորներ.	626	62	—	—
2	Կառավարչի հաշիւ	269	65	—	—
		896	27		
3	Անցնող գումարների հաշիւ	—	—	527	62
4	Դրամագլուխ	554833	33	557929	53
		555729	**60**	**558457**	**15**

ՄՈՒՏՔ Նախահաշիւներ եւ

19¹⁰/₁₁ և 19¹¹/₁₂ ուս.

		1910—1911 ուս. տ. Նախահաշիւ Ր.	Կ.	1910—1911 ուս. տ. Ճիշտ ստացուած Ր.	Կ.	1911—1912 ուս. տ. Նախահաշիւ Ր.	Կ.	1911—1912 ուս. տ. Ճիշտ ստացուած Ր.	Կ.	ԸՆԹԱՑԱՍ. ՇԻՒ 1912—1913 Ր.	Կ.
1	Դպրոցի քարվանսարայից	25.472	—	25.406	67	26.444	—	26.232	05	27,000	—
2	Տոկոսաբեր թղթեր Թիֆ. Ք. Վ. ընկ. 5% 96,000 ր. նոմինալ. արժ. օրլ. զուտ %-ը	3562	—	3194	79	4560	—	4560	—	4560	—
3	Թիֆ. Առևար Բ ընթ, հաշիւ %%	—	—	—	—	—	—	79	12	—	—
4	Ուսման վարձ աշակերտ.	2500	—	2323	25	3000	—	3158	—	3200	—
5	Ձեռագործների վաճառումից	100	—	—	—	100	—	23	75	50	—
6	Անակնկալ մուտք . . .	—	—	1035	30	250	—	1060	39	—	—
		31.634	—	31.960	01	34.354	—	35.113	31	34.810	—

Ելք Նրանց գործադրութիւնը

19¹²/₁₃ ուս. տ. Նախահաշիւը

		1910—1911 ուս. տ. Նախահաշիւ Ր.	Կ.	1910—1911 ուս. տ. Ճիշտ ծախսած Ր.	Կ.	1911—1912 ուս. տ. Նախահաշիւ Ր.	Կ.	1911—1912 ուս. տ. Ճիշտ ծախսած Ր.	Կ.	ԸՆԹԱՑԱՍ. ՇԻՒ 1912—1913 Ր.	Կ.
1	Ռոճիկներ ուսուցիչներին և միւս պաշտօնեաներին	22296	—	22275	08	22336	—	22.385	37	22.660	—
2	Ուսուցչական թոշակաբկղի գանձարանին . . .	—	—	—	—	1260	—	1260	—	1260	—
3	Ուսումնական պիտոյքներ, ֆիզիքական կաբինետ, գրադարան, կահկարասի, ձեռագործի նիւթեր, դպրոցի շէնքի վերանորոգման. դպրոցի շէնքի և շարժ. գոյքի ապահովագրութիւն, հանդէսներ, էքսկուրսիա, գեղարայք, ջուր, լուսաւորութիւն, գիւանական և տպարանական, անակնկալ և մանր ծախսեր . . .	2792	87	4069	36	3477	10	3331	97	3147	—
4	Նախաճաշ դպրոցում չք. աշակ.	—	—	—	—	—	—	108	24	500	—
5	Նպաստներ . . .	570	—	570	—	950	—	949	92	950	—
6	Քարվանս. վերաբերեալ՝ ռոճիկներ և այլ ծախսեր	5682	—	5548	56	5066	56	5182	61	6097	—
7	Հիմնադրի հոգեհանգիստ . .	—	—	—	—	60	—	59	—	60	—
		31.340	87	32.463	—	33.149	66	33.277	11	34.674	—

Դպրոցի 96.000 ր. նոմինալ արժողութեան Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան 5% լիտերալնիյ օբլիգացիաների № №

71 ՀԱՏ 1000-ԱԿԱՆ ՐՈՒԲԼԱՆՈՑ

15.398, 15.399, 15.400, 15.401, 15.402, 15.403, 15.404, 15.405, 15.406, 15.407, 15.408, 15.409, 15.410, 15.411, 15.412, 15.413, 15.414, 15.415, 15.416, 15.417, 15.418, 15.419, 13.420, 15.421. 15.422, 15.423, 15.424, 15.425, 15.426, 15.427, 04.166, 14 248. 14.678, 14.966, 14.967, 14.968, 14.969, 15.106, 15.107, 15.108, 15.109, 15.110, 15.112, 15.113, 15.114, 15,115, 15.116, 15.117, 15.118, 15.121, 15.122, 15.123, 15.124, 15.125, 15.126, 15.127, 15.253, 15.254, 15.376, 15.428, 15.429, 15.430, 15.431, 15.432, 15.433, 15.434, 15.435, 15.440, 15.441, 15.442, 15.458։

50 ՀԱՏ 500-ԱԿԱՆ ՐՈՒԲԼԱՆՈՑ

05.389, 05.969, 06.077, 06.078, 06.079, 06.080, 06.096, 06.097, 06.100, 06.104, 06.244, 06.245, 06.246, 06.247, 06.249, 06.250, 06.251, 06.252, 06.253, 06.254, 06.539, 7601, 7602, 7603, 7604, 9448, 9449, 9450, 9451, 9641, 9687, 9688, 9737, 9750, 9751, 9752, 9753, 9754, 9755, 9756, 9757, 9758, 9759, 9760, 9761, 9762, 9763, 9764, 9765, 9766։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ

1911/12 ուս. տարվայ։

Ուսումնարական տարվայ սկզբին, վերաքննութիւններից և նորեկների ընդունելութիւնից յետոյ, աշակերտուհիների թիւն էր 375, որոնք զետեղված էին 7 հիմնական և 3 զուգընթաց դասարաններում հետևեալ կերպով.

Ա. հիմ. 38, Ա. զուգ. 36, Բ. 42, Գ. 43, Դ. հիմ. 30, Դ. զուգ. 39, Ե. հիմ. 37, Ե. զուգ. 30, Զ. 57, Է. 23։

Յունվարի սկզբին քննութեամբ ընդունվեցին դարձեալ 11 աշակերտուհի, որով տարվայ ընթացքում նրանց բարձրագոյն թիւը եղաւ 386 հոգի։

Տարվայ ընթացքում զանազան պատճառներով դպրոցից հեռացան 33 հոգի (որոնցից մէկը վախճանված), այնպէս որ տարվայ վերջին աշակերտուհիների ընդհանուր թիւն էր 353։

Ուսումը դպրոցում սկսվեց սեպտեմբերի 1-ին (բացումը) և շարունակվեց մինչև մայիսի 20-ը։ Տարվայ ընթացքում դասարանական պարապմունքներ եղել են 178 օր։

Մայիսին կատարվեցին է դասարանում հրապարակական քննութիւններ բոլոր առարկաներից, իսկ միւս դասարաններում դասարանական քննութիւններ, որոնց հիման վրայ աշակերտուհիների յառաջադիմութիւնը արտայայտվում է հետևեալ կերպով.

Դաս.	Թիւ	փոխադ.	վերաքնն.	մնում են	արձակվ.
Ա. հիմ.	36	18	5	11	2
Ա. զուգ.	33	22	3	7	1
Բ. դաս.	39	18	9	11	1
Գ. դաս.	41	9	16	15	1

Դաս.	թիւ	փոխադ.	վերաքնն.	մնում են	արձակվ.
Դ. հիմն.	27	17	7	3	—
Դ. զուգ.	37	18	11	7	1
Ե. հիմն.	33	6	14	13	—
Ե. զուգ.	29	11	12	6	—
Զ. դաս.	54	22	18	14	—
Է. դաս.	24	18	—	6	—
	353	159=45%,	95=26,9%,	93=26,4%,	6=1,7%

Յառաջադիմութեան տոկոսը այս դպրոցական տարում (45) նուազ է նախընթաց տարվանից (56), գլխաւորապէս այն պատճառով, որ Մանկավարժական ժողովը այս տարի որոշեց աւելի խիստ ընտրութիւն անել դասարանից դասարան փոխադրելու ժամանակ, որպէս զի մի անգամից դասարանների պատրաստականութիւնը աւելացնէ, թոյլ և թուլացնող տարրերը չխառնելով աւելի պատրաստված տարրի հետ, որով առաջիկայում կստացվին ուժեղ դասարաններ և պարապմունքներն աւելի արդիւնաւոր կլինին։ Այս իսկ նկատմամբ Մանկ. ժողովը որոշեց վերջին՝ է դասարանի 24 աշակերտուհիներից 6-ին, իբրև անպատրաստների, պահել դասարանում երկրորդ տարին։

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Ինչպէս և անցեալ տարի՝ աշակերտուհիների մէջ չէ նկատվել առանձին պախարակելի վարք, և բոլորը վարքից ստացել են տարեկան 5 թուանշան։

Աշակերտական անխուսափելի զանցառութիւնները և կարգապահութեան խախտումները վերացվել են դաստիարակների, վարչութեան և Մանկ. Ժողովների յորդորական և դաստիարակչական միջոցներով, առանց պատիժների։

ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացակայութիւնները այս տարի համեմատաբար պակաս են եղել—17424, այսինքն միջին թուով մի աշակերտուհու վրայ գալիս է մօտ 50 բացակայութիւն—մասամբ աւելի խիստ հսկողութիւն սահմանելով բացակայութիւն-

ների նկատմամբ և մասամբ որոշելով դասից ուշացողներին բացականերից։ (Առաջ չիք էր նշանակվում երկու դէպքումն էլ, որով ստացվում էր բացակայութիւնների աւելի մեծ թիւ)։ Այնու ամենայնիւ բացակայութիւնները նորմալ լինելուց շատ բարձր են, որ հետևանք է միևնոյն պատճառներին՝ ինչ որ անցեալ տարի—այսինքն աշակերտուհիներից ոմանց երկարատև հիւանդութեան և նրանց տնտեսական և ընտանեկան անպատաստ պայմանների, որոնց դէմ մաքառելը դպրոցի միջոցներից դուրս է։

ԸՆԹԱՑԱՐԱՐՏՆԵՐԸ

Հաշուէտվութեան տարում դպրոցի լիակատար դասընթացն աւարտեցին 18 աշակերտուհի. սրանք են—

1. Աբգարեան Վարդուհի, Երևանցի.
2. Առաքելեան Հայկանոյշ, Թիֆլիսեցի.
3. Գաբրիէլեան Աննա, Թիֆլիսեցի.
4. Գալստեան Սրբուհի, Թիֆլիսեցի.
5. Դիլանեան Աշխէն, Ախալքալաքցի.
6. Իսաբէգեան Եղիսաբեթ, Իգդիրեցի.
7. Լալեան Սիրանոյշ, Գանձակեցի.
8. Խալիֆեան Շուշանիկ, Շամախեցի.
9. Կանայեան Մարիամ, Իգդիրեցի.
10. Կոլլոպոտեան Մարիամ, Ախալցխացի.
11. Ղալթաղեան Հայկանոյշ.
12. Մամաջանեան Հեղինէ, Թիֆլիսեցի.
13. Մանուկեան Արմենուհի,
14. Մելիք-Սարգսեան Սաթինիկ, Շուլավէրցի.
15. Մնացականեան Վերոնիկա, Ախալցխացի.
16. Յարութիւնեան Սաթինիկ, Թիֆլիսեցի.
17. Յարութիւնեան Վարդանոյշ, Դաղէթեցի.
18. Վարդանեան Սաթինիկ, Թիֆլիսեցի։

Ուսուցչական կազմը 19[11]|12 ուս. տարում։

ԱԶԳԱՆՈՒՆ ԵՒ ԱՆՈՒՆ	Քանի՞ տարի է ծառայում.	Ո՞րտեղ է սովորել	Ինչ առարկաներ է աւանդում եւ ո՞ր դասարաններում	Շաբաթական դասերի թիւը	Լրացեալ է դասերի թիւը	Դասերի թիւը բաց թողեալ
Աղաջանեան Արմենակ	2	Օդեսս. համալսարան	Պատմ. Ռուսաց Զ—է և ընդհանուր Գ—է, Աշխարհագրութ. Ռուսաց Ե., ապա Ռուսաց լեզու Ե—է	18	—	—
Աղասարեան Բախշի բժ.	1		Առողջապահութիւն է	2	2	
Բարասեան Յարութիւն	2	Գէորգեան ճեմարան.	Հայերէն Ա—Գ	23	2	
Բէժանեան Հեղինէ	2	Գիմնազ. և Ժընեվի հմ.	Ֆրանսերէն Դ—է	12	4	—
Դեմիրճեան Դերենիկ.	2	Ներս. դպր. և Ժընեվի համալսարանում	Հայերէն և նոր մատենագր. Դ—է	22	—	2
Կանայեան Խաչատուր	2	Գէորգեան ճեմարան	Պատմ. Հայոց Դ—է, եկեղ. պատմ. Ե—Զ և Հայաստ. աշխարհ. Դ	20	—	—
Կիւրեղեան Եղիսաբեթ	11	Արհեստաւորաց դպր.	Ձեռագործ Ա—Գ	8	2	—
Մալխասեանց Ստեփան	2	Պետերբ. համալս.	Հայերէն գրաբար և հին մատեն. Ե—է	12	2	5
Մելիք-Ջանեան Յովսէփ	2	Ուսուցչական սեմին.	Ռուսերէն Ա—Բ	15	11	—
Մելիք-Յոհանջանեան Լեւոն	5	Խարկովի համալս.	Ռուսերէն և ռուս. գրական Ե—է	16	—	—

Մինասեան Արշակ քահանայ	12	Ներսես. դպր. և գերմ. ատուաձաբ. դասընթ.	Կրօնագիտութիւն Ա-Դ	12	39	—
Մնացականեան Շուշանիկ	11	Գիմնազիա	Թուաբանութիւն	15	—	
Մուրատեան Կատարինէ	25	Գիմնազիա	Թուաբանութիւն	6	6	32
Յարութիւնեան Իսահակ	2	Ներսես. դպր. և Իենայի համալսարան	Հոգեբանութիւն, Մանկավարժ. է.	7	2	—
Յովսէփեան Գէորգ	2	Թիֆլ. գեղարվ. դպրոց	Նկարչութիւն Ա-Դ., Գեղագր. Ա-Բ	15	6	1
Շաղդամեան Մարիամ	2	Թ. Հ. Բ. Ընկ. կար ու ձևի ուսումնարան	Ձեռագործ Դ-Զ	10	—	—
Սարգսեան Նիկողայոս	2	Յիւրիխի համալսարան	Բնագիտութիւն և ընդհ աշխ. Ա-Դ	28	13	—
Տէր-Գրիգորեան Հայկանոյշ	5	Գիմնազիա	Ռուսերէն, Գ-Դ	10		
Տէր-Յովսէփեան Արշակ	2	Օդեսսայի խմբապետ. եկեղ. երգեց. կուրսեր	Երաժշտութիւն, և խմբապետ	18	43	—
Տէրեան Կարապետ	3	Գէորգ. ճեմարան, լս. Սորբոնում	Ֆիզիկա և երկրաչափութիւն Ե-է	16	6	1
Տիգրանեան Պետրոս	3	Խարկովի համալս.	Հանրահաշիւ Ե-է	12	4	—
Թումանեան Կատարինէ	1	Գիմնազիա	Ռուսերէն Գ-Դ	10	12	18

Վերակացութեան պաշտօն կատարում էին — օր. Կատ. Մուրատեան՝ աւագ վերակացուհի, տիկ. Ս. Դաւթեան (նոյն և բժշկի օգնական) և տիկ. Կատ. Թումանեան։

Դպրոցի բժիշկն էր պ. Բ. Աղասարեան։

Տարվայ ընթացքում ուսուցչական կազմի մէջ մի քանի փոփոխութիւններ եղան։

Տարվայ բուն սկզբից դպրոցի հոգաբարձութիւնը, ի նկատ առնելով դպրոցի կրօնուսոյց՝ բազմարդիւն հ. Արսէն քահանայ Բագրատունու ծերութիւնը և հիւանդոտ վիճակը՝ բարւոք համարեց նրան արձակուրդ տալ, և իբրև գնահատութիւն նրա երկարատև ծառայութեան, որ դպրոցի հիմնարկութեան օրից ի վեր, ամբողջ 34 տարի, կրօնուսոյցի պաշտօն էր կատարել և իւր ճշմարիտ քրիստոնէական ոգին ներշնչել բազմաթիւ սերունդների՝ որոշեց նրան տալ ցմահ կենսաթոշակ, տարեկան 500 ր.։ Հաշուէտվութեան տարում՝ դեկտ. 6-ին, հ. Արսէն Բագրատունին վախճանեցաւ, որին դպրոցը ցոյց տուեց պատշաճաւոր յարգանքը։

Տարվայ սկզբներում, հոկտ.-ի վերջերին, կրկնված ծանր հիւանդութեան պատճառով, ստիպված էր դպրոցը թողնել մի տարվայ արձակուրդ ուտանելով, Ռուսաց լեզուի վարժուհի տիկ. Հ. Տէր-Գրիգորեանը, որի դասերը յանձնվեցին վերակացուհի տիկ. Կատ. Թումանեանին (գիմնազիավարտ և Պետերբուրգի մանկավարժական դասընթացները լսած)։

Ապրիլի սկզբին ինքնակամ թողեց դպրոցում պաշտօնը ռուսերէնի ուսուցիչ Պ. Լ. Մելիք-Յոհանջանեանը, պետական պաշտօնով ուրիշ տեղ փոխադրվելով։

Նրա դասերը յանձնվեցին պ. Ա. Աղաջանեանին, որի ընդհանուր պատմութեան դասերի մի մասի համար ժամանակաւոր կերպով հրաւիրվեց պ. Խ. Սամուէլեան։

Ուսուցիչների այսպիսի անակնկալ փոփոխութիւնները, այն էլ ուսման ընթացքում, անտարակոյս պէտք է նկատվին վատակար աշակերտուհիների յառաջադիմութեան համար։

Բացի ցուցակով նշանակված դասերից՝ ուսուցիչներից ոմանք յանձն են առել ձրիաբար լրացուցիչ դասեր և պարապմունքներ։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշուէտվութեան տարում Մանկավարժական Խորհուրդն ունեցել է 31 նիստ։ Նիստերին բացակայ են եղել — պ. Բաբասեան, տիկ. Կիւրեղեան, պ. Յարութիւնեան, օր. Շաղգամեան, պ. Տէրեան՝ 1 անգամ. օր. Բէժանեան, պ. Մելիք-Զհանեան, օր. Մնացականեան՝ 2 անգամ. օր. Մուրատեան՝ 3 անգամ. տիկ. Դաւթեան և Հ. Մինասեան՝ 5 անգամ. տիկ. Թումանեան՝ 6 անգամ, պ. Տիգրանեան՝ 10 անգամ, պ. Տէր-Յովսէփեան՝ 12 անգամ, բժ. Աղասարեան՝ 17 անգամ *)։ (Հաշուի մէջ չեն առնվում տարվայ ընթացքում հեռացած պ. Մելիք-Յոհանջանեանի և տիկ. Տէր-Գրիգորեանի բացակայութիւնները)։ Միւս ուսուցիչներն և վարժուհիները անթերի ներկայ են եղել բոլոր նիստերին։

Բացի իւր իրաւահասութեան ենթարկված ընթացիկ խնդիրներից՝ Մանկ. Խորհուրդը հաշուէտվութեան տարվայ ընթացքում զբաղվել է մի շարք ծնայուն նշանակութիւն ունեցող կարևոր խնդիրներով, որոնց մասին հարկաւոր եմ համարում այստեղ ամփոփ տեղեկութիւն տալ։

Դեռ 190⁰/₁₀ ուս. տարում դպրոցի Մանկավարժական Խորհուրդը մշակել էր ուսման ծրագիր՝ եօթդասարանեան միջնակարգ կրթութեան համար, որպիսի վիճակի հասցրվել էր դպրոցն այն տարին։ Այս ծրագիրը, դեռ ևս Հոգաբարձութեան և հոգևոր բարձր իշխանութեան հաւանութեանն ու հաստատութեանը չառաջարկված՝ Հոգաբարձութեան համաձայնութեամբ իբրև փորձ գործադրվում էր դպրոցում նոյն 19⁰⁹/₁₀ թուին, գործադրվեց նաև յաջորդ 19¹⁰/₁₁ թուին, իմ տեսչութեան առաջին տարին։ Եւ միայն հաշուէտվութեան տարվայ վերջերին, գրեթէ երեք տարվայ գործադրութիւնից յետոյ, Մանկ. Խորհուրդը բաւականաչափ փորձառութիւն ունեցաւ ծրագրի նկատմամբ,

*) Բժ. Աղասարեանի համար պարտադիր չէր բոլոր նիստերին ներկայ լինել։

թէ որքան իրագործելի է այն, և կամ ինչպիսի փոփոխութիւնների է կարօտ։ Այն ժամանակ հարկ զգացվեց՝ ծրագիրը թեթև վերաքննութեան ենթարկել, անփոփոխ պահելով առարկաների ծաւալը, ուղղութիւնը և այլն, լոկ փորձի ցոյց տուած ուղղումները նրա մէջ մտցնելու համար, որպէսզի այնուհետև առաջարկվի պատշաճաւոր իշխանութեան ի հաստատութիւն։ ԺԶ նիստում ընտրվեցին ըստ մասնագիտութեան 11 մասնաժողով, որոնց մէջ բաժանվեցին դպրոցում աւանդվող բոլոր առարկաների ծրագիրները՝ քննելու։

Մասնաժողովները իրանց աշխատանքները կատարելուց յետոյ՝ մի շարք նիստերում (ԻԲ. ԻԴ. ԻԵ. ԻԶ.) Մանկ. Խորհրդին զեկուցեցին իրանց նկատողութիւնները ծրագիրների նկատմամբ, և Մանկ. Խորհուրդը այս զեկուցումների հիման վրայ որոշեց այս կամ այն փոփոխութիւնը մտցնել ծրագրի մէջ։ Թողնելով երկրորդական տարբերութիւնները, ինչպէս են մանր-մունր կրճատումներ և յաւելումներ, դասաւանդելի նիւթի մի մասը մի դասարանից ուրիշ դասարան փոխադրել և այլն՝ կարևոր է յիշել այս էական տարբերութիւնը, որ նախկին ծրագրով որոշված քաղաքական տնտեսութեան, կրօնների պատմութեան և տիեզերագրութեան փոխարէն մտցրվեց առողջապահութիւն և քիմիայի սկզբունքներ՝ իբրև աւելի անհրաժեշտ գիտելիքներ ապագայ վարժուհիների և մայրերի համար։ Մանկ. Խորհրդի ընդունած փոփոխութիւնները մասամբ ձևակերպվեցին նոյն տարում և մասամբ յետաձգվեցին առաջիկայ 19¹²/₁₃ ուս. տարվան։

Ծրագրի հետ մասամբ կապ ունի և մանկավարժութեան դասընթացն աւելի հիմնաւորելը և գործնական վարժութիւններով արդիւնաւոր դարձնելը։ Տեխնիկական դժուարութիւնների պատճառով 19¹⁰/₁₁ թուին զանց էին առնված գործնական վարժութիւնները (փորձնական դասեր) մանկավարժութեան դասընթացին կից, որոնք մի տարի առաջ մտցրված էին դպրոցում։ Դպրոցի Հոգա-

բարձութեան միջնորդութիւնը յարգելով՝ Գայիանեան և Զգրաշէնի դպրոցների վարչութիւնները համաձայնեցան, որ մեր դպրոցի է դասարանի աշակերտուհիները շաբաթը մի անգամ (փոխն ի փոխ) յաճախեն նրանց Ա. պատրաստական դասերը, նախ՝ իբրև լսողներ և ապա փորձնական դասեր տալու համար։ Այս միջոցով մեր ընթացաւարտները հնարաւորութիւն ունեցան տեսականապէս սովորածը գործնականապէս էլ իրացնելու և իբրև վարժուհի դպրոցական շէմքը ոտք դնելիս՝ որոշ պատրաստութիւն ունին դասարան կառավարելու և սովորեցնելու մանկավարժական պահանջների համաձայն։

Մանկ. խորհրդի ուշադրութեան գլխաւոր առարկաներից մէկն էր և աշակերտուհիների ընթերցանութեան կանոնաւորումը և դպրոցի գրադարանից օգտվելու կանոնները։ Այս հարցերով Խորհուրդն զբաղվել է 6 անգամ (նիստ Ա, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ). կազմել է, մասնաժողովների ձեռքով, ընթերցանելի գրքերի ցուցակներ Ա—Դ դասարանների համար թէ հայերէն և թէ ռուս. լեզուներով՝ դասարաններում կախելու համար. կազմել է կանոնադրութիւն դպրոցի գրադարանից օգտվելու մասին և այլն, սահմանել է կանոններ՝ հսկելու աշակերտուհիների ընթերցանութեան վրայ և այս գործում նրանց ղեկավարելու և այլն։

Մանկ. ժողովը զբաղվել է աշակերտուհիների տարազի խնդրով, նպատակ ունենալով՝ միօրինակ տարազ մտցնել և առաջն առնել պճնասիրութեան և հակառողջական արդուզարդի, որոնք, հսկողութիւն չլինելու դէպքում, դիւրաւ մուտք են գործում օրիորդաց դպրոցներում։ Նոյնպէս հոգս է տարել աշակերտուհիների մաքրութեան մասին, ոչ միայն արտաքին զգեստների, գլխի և ձեռքերի, այլ և մարմնի և սպիտակեղէնի, սահմանելով որոշ ստուգութիւններ վարժուհիների և վերակացուհիների միջոցով, առաւելապէս ստորին դասարանների համար։ Այս միջոցով Մանկավ. խորհուրդը նպատակ ունէր ոչ մի-

այն գործնական կերպով մաքրութիւն մտցնել աշակերտուհիների մէջ, որ ամեն տեսակէտից օգտակար և հանրաշխատ է, այլև փոքր հասակից նրանց ընտելացնել մաքրասիրութեան, որ մեր ընտանիքներում շատ կարևոր նշանակութիւն ունի։

Մանկ. Խորհուրդը նոյնպէս մշակեց կանոններ այն օրիորդների համար, որոնք դուրսը միջնակարգ կրթութիւն առացած լինելով ցանկութիւն են յայտնում մեր դպրոցում վերջնական քննութիւն տալու հայագիտական առարկաներից։

ԴՊՐՈՑԻ ԴՐԱԴԱՐԱՆԸ

Շնորհիւ անցեալ տարի կատարված նախապատրաստական աշխատանքների և այս տարի շարունակվող հոգացողութեան դպրոցի գրադարանը բոլորովին բարեկարգվեց, հարստացաւ նոր գրքերով (Մանկ. Խորհրդից հաւանութիւն գտած ցուցակներով) և սկսեց իւր իսկական կոչման ծառայել, ընթերցանութեան և պարապմունքների համար գրքեր մատակարարելով աշակերտուհիներին և ուսուցիչներին։

Տարվայ ընթացքում գնված են նոր գրքեր — հայերէն 325 անուն և ռուսերէն 163 անուն, այնպէս որ տարվայ վերջում դպրոցն ունէր 1061 անուն հայերէն, 810 անուն ռուսերէն և 75 անուն այլ լեզուներով գրքեր, ընդամենը 1946 անուն։

Գրադարանապետ պ. Գ. Յովսէփեանի պահած ցուցակից երևում է, որ աշակերտուհիները տարվայ ընթացքում կարդացել են 1)

դասարան	հայերէն	ռուսերէն	գումար
Գ.	179	26	205
Դ. Դզ.	495	63	558

1) Ա. Բ. դասարաններում ընթերցանութեան գրքերը, Մանկ. Խորհրդի որոշմամբ, բաժանում էին պ. դաստիարակները։ Այդ դասարանների վիճակագրութիւնը պակասում է։

Ե. Եզ.	391	109	500
Զ.	338	47	385
Է.	66	13	79
	1469	258	1727

Ուրեմն միջին թուով Գ—Է դասարանների 245 աշակերտուհիներից իւրաքանչիւրը կարդացել է դպրոցից վերցված 6 գիրք հայերէն և 1 գիրք ռուսերէն։

Սակայն աշակերտուհիներն այս տարի ևս շարունակում էին օգտվել նաև Կ. Հ. Բ. Ընկերութեան գրադարանից, որ գրքեր էր մատակարարում աշակերտուհիներին առաջվայ նման առանց գրաւականի։ Այս ընթերցանութեան վիճակագրութիւնը ձեռքի տակ չունիմ։

ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

Երգեցիկ խումբը այս տարի շարունակեց կատարելագործվել թէ հոգևոր և թէ աշխարհիկ խմբական երգեցողութեան մէջ։ Բացի դպրոցական հանդէսներից՝ դպրոցի երգեցիկ խումբը տարվայ ընթացքում մի քանի անգամ երգել է եկեղեցիներում քառաձայն պատարագ, յատկապէս 4 անգամ երգել է Մոլնու Ս. Գէորգ եկեղեցում մեծ պասի կիրակիներին, եկեղեցու հոգաբարձութեան ցանկութեան համաձայն։ Եկեղեցու հոգաբարձութիւնը դրամական մի համեստ նուէր է տուել երգեցիկ խմբին, որ պահվում է դպրոցի գանձարանում յատուկ երգեցիկ խմբի անունով։

Զայնական երգեցողութեան հետ միասին Մանկավարժական Խորհուրդը օգտակար գտաւ, համաձայն ուսուցիչ պ. Դեմիրճեանի առաջարկութեան, մտցնել և գործնական խմբական երաժշտութիւն։

Այս գործի ղեկավարութիւնը ձրիաբար յանձն առաւ պ. Դեմիրճեանը, որի համար շնորհակալութիւն եմ յայտնում նրան։

ԹՈՇԱԿԱՐԿՂ. ԵՒ ՓՈԽԱՏՈՒ ԳԱՆՁԱՐԱՆ

Դեռ անցեալ տարի միտք էր յղացել՝ հիմնել դպրոցում Թոշակարկղ, որ դպրոցի երկարամեայ (15, 20 և 25 տարի) ծառայողներին և նրանց ընտանիքներին կենսաթոշակ տար և սրանով մասամբ ապահովէր նրանց ծերութեան հասակը կամ, նրանց մահուան դէպքում, նրանց ընտանիքը։ Դպրոցի Հոգաբարձութիւնը սկզբունքով համաձայնել էր տարեկան մի որոշ նպաստ տալ ամեն տարի այս Թոշակարկղին։ Այս հիման վրայ Մանկ. Խորհուրդը կազմել էր մասնաժողով՝ Թոշակարկղի կանոնադրութիւն կազմելու և հաշիւները անելու։ Կանոնադրութիւնը Մանկ. Ժողովի մէջ քննելուց և ընդունվելուց յետոյ առաջարկվեց Հոգաբարձական Խորհրդի բարեհաջողութեան։ Այստեղ ևս քննվեց և ինչ-ինչ խմբագրական փոփոխութիւններով ընդունվեց և որոշվեց ուղարկել Ամենայն Հայոց կաթուղիկոսին ի հաստատութիւն՝ երբ նոր հայրապետը ընտրվի։ Իսկ մինչև այդ՝ թէ Հոգաբարձութիւնը և թէ ծառայողները համաձայնեցին, գործը մի տարով չյետաձգելու համար՝ տարվայ հէնց սկզբից, այսինքն սեպտեմբերից, կատարել սահմանված 6% բարձումները։ Այնպէս որ 19³¹/₁₂ ուս. տարվայ սկզբից իրօք գոյութիւն ստացաւ և սկսեց գործել դպրոցի ծառայողների Թոշակարկղը և տարվայ վերջին արդէն ունէր 2850 ր. դրամագլուխ։ Այս գումարի մէջ է մտնում և Տիկ. Վ. Բանանեանի նուիրած 500 ր., որ անցեալ տարի, դպրոցն այցելելիս, լսելով զեկուցում Թոշակարկղ հիմնելու կարևորութեան մասին՝ նուիրեց այս գումարը իբրև ֆոնդ ապագայ Թոշակարկղին։

Թոշակարկղի կանոնադրութեան իբրև հիմք ընդունված է Ներսիսեան դպրոցինը, փոփոխելով և լրացնելով մի քանի կէտեր, որոնք Ներս. դպրոցի 10-ամեայ գործունէութեան ընթացքում նկատվել էին։ Բայց ունի մի էական տարբերութիւն. մինչդեռ Ներս. դպրոցի Թոշակարկղի կանոնադրութեան զօրութեամբ դպրոցը միայն 15 տարվայ ընթացքում տալու է Թոշակարկղին նպաստ տարեկան 3000 ր., մեր դպրոցի կանոնադրութեամբ դպրոցի նպաստը պիտի լինի մշտական և հաւասար պիտի լինի ծառայողների խնայողութեան, այն է տարեկան ռոճկի 6%-ին։ Այնպէս որ մինչդեռ Ներսիսեան դպրոցի նպաստը անփոփոխելի մի գումար է կազմում, որ ծառայողների վրայ աւելի կամ նուազ չափով է մասնատվում, նայելով նրանց թուի և ռոճկի պակասելուն կամ աւելանալուն՝ մեր դպրոցում դպրոցի նպաստը ծառայողների վրայ մասնատվում է միշտ միևնոյն (ինչպէս հաշիւները ցոյց են տուել՝ բաւարար) չափով, անկախ նրանց թուից և ռոճկից, քանի որ ռոճիկներն աւելանալու դէպքում աւելանում է և նպաստը։ Այս տեսակէտից՝ մեր դպրոցի Թոշակարկղը աւելի ապահով հիմքի վրայ է դրված։

Թոշակարկղին կից՝ օգտակար համարվեց հիմնել փոխատու գանձարան, որի նպատակն է՝ մատչելի տոկոսով կարճատև (ոչ աւելի քան մի տարի ժամանակով) փոխատուութիւններ տալ ծառայողներին, նրանց ռոճիկներից տարվայ ընթացքում պարտքը հանգցնելու պայմանով։ Այս գանձարանի գործունէութեան համար իբրև ֆոնդ որոշվեց յատկացնել Թոշակարկղի գոյքից մի որոշ գումար (ոչ աւելի քան երկու ամսվայ ռոճիկների չափով). տիկ փոխատու գանձարանի ստացած տոկոսները տարեցտարի պէտք է մտնեն Թոշակարկղի գանձարանը։—Այս նպատակով կազմված կանոնադրութիւնն ընդունվեց Մանկավարժական խորհրդից և հաստատվեց Հոգաբարձութեան կողմից, և փոխատու գանձարանը սկսեց գործել։

ՆԱԽԱՃԱՇ ԶՔԱՆՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յայտնի է, որ մեր դպրոցի աշակերտուհիների մեծ մասը Ժողովրդի չքաւոր դասակարգից է։ Սրանցից շատերը մնունդի պակասութեան պատճառով թուլակազմ են

և ենթակայ յաճախակի հիւանդութիւնների։ Եղել են նոյն իսկ դէպքեր, որ ուղղակի քաղցի պատճառով աշակերտուհիներից ոմանք ուշաթափվել են դասի ժամանակ։ Այսպիսի պայմաններում գտնվող աշակերտուհիները անտարակոյս չէին կարողանայ նուիրվել ուսման, իւրացնել աւանդված առարկաները. և եթէ նրանք, շնորհիւ արտակարգ ընդունակութեան կամ լարված աշխատանքի, կարողանային էլ ուսումը բաւարար կերպով աւարտել՝ դուրս կգային դպրոցից հիւծված, քայքայուած, աշխատանքի անընդունակ էակներ, որոնց գլխին շարունակ կախված կլինէր որևէ վարակիչ հիւանդութեան կամ թոքախտի զոհ դառնալու վտանգը։ Դպրոցի բժիշկ պ. Աղասարեանի հոգատարութիւնը և ձրի մատակարարված դեղերը չէին կարող այս չարիքի առաջն առնել. հարկաւոր էր իսկական դեղը մատակարարել—սնունդ։ Մեր աշակերտուհիներից ամենաչքաւորները, վարչութեան և Մանկ. խորհրդի ընտրութեամբ, ձրի ճաշ էին ստանում—12 հոգի Բարեգործական ընկերութեան ճաշարանում և 10 հոգի Հաւլաբարի (տիկ. Աւթանդիլեանի) ճաշարանում, որի համար խորին շնորհակալութեան արժանի են այս հիմնարկութիւնները։ Բայց այսքանը քիչ էր՝ համեմատած կարիքի մեծութեան հետ։

Այս նկատումներով հաշուէտվութեան տարում ցանկալի համարվեց դպրոցում կազմակերպել ձրի նախաճաշ 50—60 աւելի կարօտ աշակերտուհիների համար, որոնց վրայ, նախահաշուով տարեկան ծախս պէտք է լինէր մօտ 600 ր.։ Հոգաբարձութեան համաձայնութեամբ ճաշարանը բացվեց 1912 թուի մարտի 5-ին և անընդհատ շարունակեց իւր գործունէութիւնը մինչև ուս. տարվայ վերջը (բացի կիրակի և տօն օրերից)։ Նախաճաշարանում, դպրոցի հոգաբարձուհի մայրապետ Հռ. Թայիրեանի, այս հիմնարկութեան ջերմ փափագողի, յօժարամիտ առաջարկութեամբ, կուսանաց անապատից երկու կոյս օրապահութիւն են անում, որի պատճառով խորին շնորհակալութիւն եմ յայտնում բարեշնորհ մայրապետին և կոյսերին։

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ, ԵՐԵԿՈՅԹՆԵՐ, ՁԲՕՍԱՆՔՆԵՐ։

Տարվայ ընթացքում տեղի ունեցան երեք դասախօսութիւններ. նոյեմբերի 8-ին, Լոմոնոսովի ծննդեան 200-ամեակի առիթով դասախօսեց ուսուցիչ պ. Լ. Մելիք-Յոհանջանեանը։ դեկտ. 9-ին ուսուցիչ պ. Ն. Սարգսեանը դասախօսեց «Երկրի անցեալը, ներկան և ապագան» թեմայով, իսկ ապրիլի 20-ին, «Սպիտակ ծաղկի» տօնին, դպրոցի բժիշկ պ. Բ. Աղասարեանը դասախօսեց թոքախտի (տուբերկուլոզի) և նրա դէմ կռվելու մասին։

Տարվայ ընթացքում չորս անգամ դպրոցում տեղի ունեցան աշակերտական գրական-երաժշտական երեկոյթներ, ուսուցիչ պ. Դ. Դեմիրճեանի մասնակցութեամբ և ղեկավարութեամբ, որոնց ժամանակ աշակերտուհիները հանդէս էին գալիս երգեցիկ և նուագածուների խմբերով, դերակատարութեամբ և զանազան կտորներ արտասանելով ու նուագելով։ Երեկոյթների ժամանակ աշակերտուհիներին բաժանվում էր. չայ, մրգեղէն և հետևում էին պարեր։

Թատրոնական սեզոնի ընթացքում, վարչութեան ընտրութեամբ, աշակերտուհիներն օգտվում էին հայկական ներկայացումներից, որոնց համար Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը ձրիաբար յատկացրել էր մի օթեակ՝ 4 անձի համար։ Խորին շնորհակալութիւն եմ յայտնում յիշեալ ընկերութեան։ Բացի սրանից՝ դպրոցը պատիւ ունեցավ ստանալու Նորին Պայծառափայլութիւն կոմսուհի Վօրոնցօվա-Դաշկովայից 4 օթեակ, 16 աշակերտուհու համար, այն աշակերտական ներկայացման համար, որ կազմակերպել էր Նորին Պայծառափայլութիւն Կովկասեան Փոխարքան՝ Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրի անուանակոչութեան օրը։

Հոգաբարձութիւնը այս բարձր ուշադրութեան համար իւր խորին շնորհակալութիւնը գրաւոր յայտնեց Կոմսուհուն։

Բացի մի քանի զբօսանքներից, որ աշակերտուհիները, ուսուցիչների մասնակցութեամբ, կատարեցին քաղաքի շրջակայքում, այս տարի ևս ընթացաւորա օրիորդները յունիսին կատարեցին էկսկուրսիա դէպի Սանահին, որտեղ, թեմիս կառավարիչ սրբազան Եփրեմ եպիսկոպոսի կարգադրութեամբ, օթևան և հիւրընկալութիւն գտան նորաշէն առաջնորդարանում։ Աշակերտուհիները հետաքրքրութեամբ դիտեցին հինաւուրց եկեղեցիները, պատմական յիշատակարանները, իշխանուհի Սոփիա Արղութեանի հիմնած վայելուչ դպրոցը և Ալլահվերդի պղնձահանքի գործարաններն ու հանքերը, լսելով հանքերի կառավարչի սիրալիր բացատրութիւնները։ Սոցա բոլորին խորին շնորհակալութիւն եմ յայտնում դպրոցի վարչութեան և աշակերտուհիների կողմից։ Էկսկուրսիային մասնակցում էին իրանց սեփական ծախսով դպրոցի մի քանի ուսուցիչներ և բժիշկ պ. Բ. Աղասարեանը իւր դրսեր հետ, որ Սանահին գիւղում մեծ քանակութեամբ հիւանդներ ընդունեց, որոնց համար դեղերը, բժշկի ցուցմամբ, պատրաստում էր նրա դուսարը՝ դպրոցից վերցված դեղարանի նիւթերից։ Հոգաբարձութեան այս էկսկուրսիայի համար յատկացրած 100 ր. գումարից ծախսվեց միայն 60 ր. որովհետև ծախսերի միւս մասը հոգացին իրանք աշակերտուհիները։

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՍԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՆ ՎԻՃԱԿԸ։

Տարվայ սկզբից դպրոցի բժիշկ և առողջապահութեան դասատու հրաւիրվեց պ. բժ. Բ. Աղասարեանը, որ ամեն օր այցելում էր դպրոցը և այստեղ ընդունում աշակերտուհիներին, դպրոցի դեղարանից ձրի մատակարարելով դեղորայք՝ որ պատրաստում էր նրա օգնականուհին և դպրոցի վերակացուհի տիկ. Դաւթեանը։ Աւելի բարդ դեղերը ստացվում էին դեղատներից, երբեմն դպրոցի և երբեմն աշակերտուհիների հաշուով։ Ծանր

դէպքերում, պ. Աղասարեանը այցելում էր աշակերտուհիներին իրանց տներում, իսկ եթէ հիւանդութիւնները աւելի լուրջ էին լինում և կարօտ աշալուրջ հսկողութեան և մշտական բժշկական խնամքի՝ պ. բժիշկը միջնորդում էր Արամեան հիւանդանոցի վարչութեան մօտ և այնտեղ փոխադրել տալիս հիւանդին։ Որոշ մասնագիտական բժշկութեան համար, օրինակ աչքի, ատամի և այլն, աշակերտուհիները, դպրոցի վարչութեան յանձնարարականով, դիմում էին ակնաբոյժ պ. Գէորգբէգեանի, բժ. Մխիթարեանի և Մունինի և ատամնաբոյժ պ. Կաճկաճեանի և Վարդիլեանի մօտ և ձրի բժշկական օգնութիւն ստանում, որի համար խորին շնորհակալութիւն եմ յայտնում նրանց։

Աշակերտուհիներից 3 հոգի, որոնք տարուայ վերջին բոլորովին հիւծված էին և անշուշտ կարիք ունէին առողջարար օդի և առատ սնունդի՝ Կ. Հ. Բար. Ընկերութիւնը համաձայնեց, թեթև վարձատրութեամբ (ամառվայ համար իւրաքանչիւրին 15 բուբլի) Խուդադեան որբանոցի սանուհիների հետ տանել Դիլիջան ամարանոց, որտեղից նրանք վերադարձան ողջ-առողջ, կազդուրված և կենսուրախ։ Երկու ուրիշ հիւանդ աշակերտուհիների ևս դպրոցը դրամական նպաստ տուեց և ուղարկեց հայրենիք՝ իրանց ծնողների խնամքի տակ ապրելու և կազդուրվելու։

Պ. բժիշկը իւր տարեկան զեկուցման մէջ մի շարք առողջապահական առաջարկութիւններ է արել, որ դպրոցի վարչութիւնը կաշխատի իրագործել հնարաւորութեան չափով։

Տեսուչ Ստ. Մալխասեանց

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԱԻՄ. ԵՐԵՎԱՆ
Հ. Ս. ՍՍՀ ԳԱ

51. 364

vip-1
qw-1